Արմեն Սարգսյան

Ծննդյան թիվն ու վայրը՝
ծնվել է 1974թ. հունվարի 6-ին, Ալավերդիում:

Կրթությունը՝

1991-1997թթ. ԵՊՀ, արևելյան լեզուներ և գրականություն, արաբագետ-բանասեր, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, թարգմանիչ
1995-1996թթ. Կահիրեի համալսարանի արաբական գրականության և պատմության ֆակուլտետ
1997-2000թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա
1998-2000թթ. ՌԴ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիա
2004թ. Ջ. Մարշալի անվան կենտրոնի կողմից կազմակերպվող դասընթաց (Գարմիշ-Պարտենկիրխեն, Գերմանիա):

Աշխատանքային գործունեությունը՝

1997-1998թթ. ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների բաժանմունքի տեղեկատվության բաժնի ռեֆերենտ,
1998-2000թթ. ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների բաժանմունքի կցորդ,
2000-2001թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի կցորդ,
2001-2004թթ. Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսության 3-րդ քարտուղար,
2004-2005թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի 3-րդ քարտուղար,
2005-2006թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի 2-րդ քարտուղար,
2006- 2007թթ. Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանության 2-րդ քարտուղար,
2007-2008թթ. Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ դեսպանության 1-ին քարտուղար,
2008թ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի 1-ին քարտուղար,
2010թ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վարչության Արաբական երկրների և Իսրայելի բաժնի 1-ին քարտուղար,
2010-2012թթ. Քուվեյթում ՀՀ դեսպանության 1-ին քարտուղար,
2012թ.-ից՝ խորհրդական,

2015-2017թթ. ՀՀ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների և Իսրայելի բաժնի խորհրդական,
2016 օգոստոս-2017 հունվար Սիրիայում ՀՀ դեսպանության խորհրդական,
2017-2021թթ. Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս:

2021թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Դոհա):

Դիվանագիտական աստիճանը՝
արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Պետական պարգևներ՝

ՀՀ նախագահի կողմից՝ «Մխիթար Գոշ» մեդալ, ՀՀ ԱԳՆ կողմից՝ «Ջոն Կիրակոսյան» հուշամեդալ, ՀՀ ՊՆ կողմից՝ «Անդրանիկ Օզանյան» մեդալ, ՌԴ ՊՆ կողմից՝ «Սիրիայում ռազմական օպերացիայի մասնակից» մեդալ, Սիրիայի ՊՆ կողմից՝ «Համագործակցության» մեդալ, ՌԴ ՊՆ կողմից՝ «Սիրիայում խաղաղապահ առաքելության մասնակից» մեդալ, ՌԴ ՊՆ կողմից՝ «Սիրիայում ՌԴ զինված ուժերի հակաահաբեկչական օպերացիայի 5-ամյա տարելից» մեդալ և «Մարտական համագործակցության ամրապնդման» մեդալ, «Ֆրիտյոֆ Նանսենի» ոսկյա հուշամեդալ:

Օտար լեզուներ՝
ռուսերեն, անգլերեն, արաբերեն:

Ընտանեկան դրությունը՝
ամուսնացած է, ունի մեկ որդի: